

ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ԲԱՐԵՐԱՐ ԳԱԼՈՒՍՏ ԿՅՈՒԼՊԵՆԿՅԱՆԻ ԿՏԱԿԻ ԳՈՐԾԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետը մեծ ուրախությամբ և շնորհակալությամբ ստացավ 21 մայիս 1958 թվակիր մի պաշտոնագիր Լիսաբոնից, որով Գալուստ Կյուլպենկյան հիմնարկությունը տեղեկացնում է, թե հանգուցյալ Գալուստ Կյուլպենկյանի կտակի տրամադրությունների համաձայն և հիմնարկության պատվիրակներ պրոֆ. սըր Սիդնի Քեյնի և ճարտարապետ պր. Եդվարդ Ուրուեյանի զեկուցման և Մայր Աթոռից ուղարկված փաստաթղթերի հիման վրա, Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության կտակակատարներ դոկտ. Ժոզե դե Ազերեդո Պերդիգառն, պր. Գ. Լ. Եսայանը և հիմնարկության խնամակալները որոշել են սկսել կտակի գործադրության, որով Մեծ Բարերարը Ս. Էջմիածնի վերաշինության համար նախատեսել էր 400 000 դոլլար:

Առաջին հատկացումը՝ 80 000 դոլլար, 1958 թվականի մայիսի 20-ին փոխանցվել է արդեն Նյու-Յորքի Ժ. Պ. Մորգան և ընկ. դրամատան, Հյուսիսային Ամերիկայի հայոց Արևելյան թեմի առաջնորդարանի անունով, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տրամադրության տակ:

Հաջորդ հատկացումները կկատարվեն 1958—1959 տարիների ընթացքում, վերաշինության աշխատանքներին զուգընթաց: